

հաստատել է ներքին համաձայնություն մը մեր էություն եւ այն բարբառն ունեցող ազգին նկարագրի հիմնական յատկութեանց հետ որք այդ լեզուին բառերով ու բացատրութիւններով արտայայտուած են արդէն: Եւ եթէ ամէն ճշմարիտ հայ քաջահմուտ չէ իր լեզուին, ամէն հայերէնագէտ հայ ճշմարիտ հայ մըն է անտարակոյս:

\*\*\*

Սակայն, ի՞նչ գաղափարներ եւ ինչպիսի՞ մտաւորականություն մըն է զոր իր պերճափայլ լեզուով կ'արտայայտէ կամ կը զգացնէ մեզ Յովի. Մեթեան: Այս կէտը կարելոր է, վասն զի բանաստեղծութիւնն, – ինչ որ ալ ըսուի այդ մասին – մտածողութեան մէկ ազատագրումը չէ բանականութենէն. եւ եթէ զբօսանք իսկ ըլլար, դարձեալ պիտի չըլլար սանձարձակում մը խորթակներու եւ յուզումներու: Ինչ որ գեղեցիկ է՝ նուազ ենթակայ չէ բանականութեան, քան ինչ որ բարի է. եւ բանաստեղծական արուեստն ու գեղեցիկ արուեստները ոչ այլ ինչ են, քան բանականութիւնն՝ յուզումներուն մէջ:

Ապա բանաստեղծութեան մէջ ներկայ է մարդն իր մարդկային սեփական յատկանիշներով. այսինքն՝ մարդը որ կը խորհի, եւ ընդհանուր գաղափարներու համեմատ ինքզինքն ու իր գործերը կը վարէ: Եւ գիտէք որ զգացումները չեն այլ ինչ, բայց եթէ յուզումներ զոր գաղափարք կը ծնին: Այնքան աւելի վարակիչ են բանաստեղծին զգացումները որքան աւելի՛ արդիւնք են մարդկային յատկանիշներու, այսինքն՝ բանական սկզբանց եւ կարողութեանց, որքան աւելի՛ կրեն կնիքն այդ յատկանիշներուն: Ո՛չ թէ երբ աւելի կը խորհի բանաստեղծը, քան կը զգայ, կ'իմաստասիրէ, քան կ'երգէ, այլ որքան աւելի՛ ուղիղ կը խորհի, որքան աւելի՛ իր զգացմանց սկիզբը գտնուած է գաղափար մը՝ հարազատօրէն բանական:

Հարկ է յիշեցնել թէ չարին ու բարոյն անխար եւ հաստատուն ճանաչումը խորագոյնն է մեր բանական կարողութեանց, եւ հասարակաց խարիսխը մեր բոլոր